

ՄԵՏԱ-ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Meta-Ethics

Ի՞նչ է **մետա-բարոյագիտութիւնը**:

Ինչպէս ներածութեան մէջ նշեցինք, բարոյագիտութեան (Ethics) ուսումնասիրութեան առարկան՝ բարոյականութիւնն (Morals) է: Այս իմաստով, բարոյագիտութիւնը կը զբաղի նոյնիսկ բարոյականութեան երեւոյթի զանազան տեսակէտներով:

Բարոյագիտութիւնը, մակարդակային տեսակէտէն, կարելի է բաժնել երեք մասերու.-

- **Կանոնական բարոյագիտութիւն** (Normative Ethics), որ բարոյական կանոններ կը սահմանէ եւ կը փորձէ զանոնք հիմնաւորել,
- **Նկարագրական բարոյագիտութիւն** (Descriptive Ethics), որ երբեք բարոյական կանոններ չի սահմաներ, այլ բարոյական երեւոյթները կը նկարագրէ միայն եւ
- **Մետա-բարոյագիտութիւն** (Meta-Ethics), որ կը նպատակադրէ բարոյականութեան երեւոյթի գիտական ուսումնասիրութիւնը՝ մեթոդական կամ լեզուա-վերլուծական բնոյթի արտայայտութիւնները սահմանելով:

1.- Կանոնական բարոյագիտութիւն

Կանոնական բարոյագիտութիւնը (Normative Ethics) իսկական փիլիսոփայական բարոյագիտութիւնն է, որ օրինաչափական բնոյթ կը կրէ, այսինքն՝ կանոններ կը սահմանէ:

Բարոյագիտական որեւէ տեսութեան ելակէտը կը նկատուի՝ «*Ի՞նչ է բարոյական ճիշդ վարմունքը*» հարցադրումը: Այս իմաստով, կանոնական